# ՍԻՐՏ ՄԱՐԴՈՅ

Չունեմ գորգ[1] խմցող՝ ասող ու լսող,
Գոյ նըստի զըրուց տայ, բանայ էս սիրտըս.
Մ՚ին դամ[2] ծերանամ ա՛յ[3] աշխարհըս մոռանամ,
Մ՚ին դամ թաղայ՝[4] նօ[5] կ՚ ջըվան ա՛յ[6] էս սիրտն.
Ագամորդուս սիրտըն ճընճղի նըման ա՛յ,
Մ՚ին դամ զաֆաղում[7] ա՛յ, մ՚ին դամ թամամ ա՛յ.
Մ՚ին դամ Ա՛րեւան[8] ա՛յ, մ՚ին դամ Ա՛շտարխան,
Մ՚ին դամ հըրէն[9] Հընդըստան ա՛յ էս սիրտըն:
Ագամորդուս միտքըն շատ ա՛յ ու մըլոր,
Մ՚ին դամ գող համարի մ՚ին դամ ճըգնաւոր.
Մ՚ին դամ գանձ խաղինով աղխէ թագաւոր,
Մ՚ին դամ աղքատ փէրիշան[10] ա՛յ էս սիրտն:
Մ՚ին դամ չար ա՛յ գործում, մ՚ին դամն բարի,
Մ՚ին դամ աղօթք անում վասըն աշխարհի,
Մ՚ին դամ ումըր[11] ա՛յ խնդրում չուր[12] հարիւր տարի,
Մ՚ին դամէն յէտ փօշիման[13] ա՛յ էս սիրտըն:
Մ՚ին դամըն ծախում ա՛յ մ՚ին դամըն առման,
Մ՚ին դամ տաքանան ա՛յ՝ մ՚ին դամըն սառման.
Մ՚ին դամ բոց կըրակի նըման ա՛յ վառման,
Մ՚ին դամէն յէտ խօլաման[14] ա՛յ էս սիրտըն:
Մ՚ին դամ խմանըն[15] կէս դիւան[16] կը ծախի,
Մ՚ին դամ Աստուած միտ կը բերի, կը վախի,
Մ՚ին դամըն Գէանջայ ա՛յ, Շիրուան, Շամախի,
Մ՚ին դամըն Հընդըստան ա՛յ էս սիրտըն:
Մ՚ին դամ Փըբրով[17] խալխի[18] տալման[19] ա՛յ աղար[20],
Մ՚ին դամ աշխարհ համայն չի բերում նազար[21],
Օրըն մ՚ին ա՛յ փիքըրըն լաք[22] հարիւր հազար,
Պ.ՕՂԼ.—Լ.ՃԱՂ, ընչու՞ր նըման ա՛յ էս սիրտըն:

1. Գորգ.— ցաւ, վիշտ: 2. Մ՚ին դամ.— մէկ մը, երբեմն: 3. Ծերամանայ.— կը ծերանայ, ծերանայ. այսպիսի խոնարհումներ գլխաւորապէս կը գտնուի Ջուղայի գաւառական լեզուի բարբառոյն մէջ, և այն երգոյն մէջ ալ որ շատ կայ, ինչպէս են առնմանայ, կը սառի, պառնանայ, կը տաքնայ և այլն: Արցախեան բարբառոյն մէջ կ՚առնեն՝ ծերանամանայ, առնամանայ, պառնանանայ և այլն, յորս ա՛յ կամ ա վերջաւորութիւնն է վերջաւորութեան տեղ գործ կը դրուի: 4. Թաղայ.— թարմ: 5. Նօ.— նոր: 6. Ջըվան. ճիւան.— երիտասարդ, կորիւն: 7. Զաֆաղում.— վշտագին: 8. Ա՛րեւան.— Երեւան քաղաք: 9. Հըրէն.— աչօ՛ տեղ: 10. Փէրիշան.— տառապեալ, ցիր ու ցան: 11. Ումըր.— կեանք, կենդանութիւն: 12. Չուր.— մինչև: 13. Փօշիման ա՛յ.— կը զղջայ, կ՚ապաշխարի: 14. Խօլաման ա՛յ.— հալածեալ, զրկեալ. արդէն Վասպուրականի բարբառոյն մէջ եւս կը հնչեն շատ անգամ՝ ձ գրին տեղ: 15. Խման. հաւասար, օրէնք: 16. Դիւան.— դրամի ամենափոքր մասն, դինար, փարայ: 17. Փըբրով.— մասամբ մասնիք, խաբուսիկ: 18. Խալխ.— ժողովուրդ, բազմութիւն մարդկանց: 19. Տալման ա՛յ.— կը տայ տալ: 20. Աղար.— յանդգնութիւն, ցաւ.— աղար փող.— յանդգնաբար: 21. Նազար.— ակնարկ, ակնարկութիւն: 22. Լաք.— հարիւր հազար:



digitised by A.R.A.R.@